

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն
տնօրենների խորհրդի որոշմամբ
Արձանագրություն N _____, _____ 2010թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտ 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ	3
Հոդված 2. Հիմնական հասկացություններ	3
Հոդված 3. Տեղեկատվական քաղաքականության հիմնական սկզբունքները.....	3
Հոդված 4. Տեղեկությունների բացահայտման եղանակներն ու ձևերը	5
Հոդված 5. Տեղեկությունների հրապարակումն ինտերնետային ցանցում	5
Հոդված 6. Տեղեկությունների հրապարակումն էլեկտրոնային լրատվամիջոցներով ...	7
Հոդված 7. Տեղեկությունների հրապարակումն մամուլի միջոցներով	7
Հոդված 8. Բաժնետերերին տեղեկություններին (փաստաթղթերին) մուտքի հնարավորության ապահովում և նրանց պահանջով փաստաթղթերի պատճենների տրամադրում	7
Հոդված 9. Տեղեկությունների բացահայտման այլ եղանակներ	8
Հոդված 10. Ընկերության բաժնետերերի ժողովի մասին տեղեկություններ.....	8
Հոդված 11. Ընկերության տարեկան հաշվետվությունների բացահայտումը.....	8
Հոդված 12. Միջանկյալ հաշվետվությունների տեսքով տեղեկությունների բացահայտում	9
Հոդված 13. Էական փաստերի և տեղեկությունների բացահայտում	9
Հոդված 14. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկումների գործընթացների փուլերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտում	10
Հոդված 15. Արժեթղթերի ազդագրի տեսքով տեղեկությունների բացահայտում	10
Հոդված 16. Ընկերության փոխկապակցված անձանց մասին տեղեկությունների բացահայտում	10
Հոդված 17. Ընկերության պաշտոնատար անձանց կողմից տեղեկությունների բացահայտման կարգը.....	10
Հոդված 18. Ընկերության կողմից կոնֆիդենցիալ և ներքին (ինսայդերական) տեղեկությունների պաշտպանությունը	11

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կանոնակարգը մշակված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջներին համապատասխան և սահմանում է՝
- ա) Ընկերության կողմից տեղեկատվության բացահայտման կանոնները,
 - բ) բաժնետերերին, այդ թվում՝ պոտենցիալ ներդրողներին և արժեթղթերի շուկայի մասնակիցներին բացահայտման ենթակա տեղեկությունների և փաստաթղթերի կազմը,
 - գ) բաժնետերերին, այդ թվում՝ պոտենցիալ ներդրողներին և արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց բացահայտման ենթակա տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացման կարգն ու ժամկետները:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

- 2.1. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.
- «Պաշտոնատար անձ».** Ընկերությունում կազմակերպա-կառավարչական կամ կառավարչա-տնտեսական գործառույթներ իրականացվող անձ,
- «Շահագրգռված անձ».** պոտենցիալ ներդրող կամ արժեթղթերի շուկայի ներդրումային ծառայություններ մատուցող անձ,
- «Նորությունների շարք».** տեղեկատվական ռեսուրս, որը վերարտադրվում է իրական ժամանակի ռեժիմում և ներկայացվում է տեղեկատվական գործակալություններին ու զանգվածային լրատվական միջոցի կարգավիճակ ունեցող այլ կազմակերպություններին,
- «Տեղեկությունների բացահայտում».** բաժնետերերին և շահագրգիռ անձանց տեղեկությունների հասանելիության (մուտքի) ապահովում՝ անկախ այդ տեղեկությունների տեղակայումը կամ ստացումը երաշխավորող ընթացակարգերով տեղեկությունների ստացման փաստից,
- «Տեղեկությունների բացահայտման պահը».** ԼՂՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված բացահայտման ենթակա տեղեկությունների հրապարակման պահը:

Հոդված 3. Տեղեկատվական քաղաքականության հիմնական սկզբունքները

- 3.1. Տեղեկատվական քաղաքականությունը Ընկերության մասին անհրաժեշտ ծավալի տեղեկությունների բացահայտման նպատակով իրականացվող միջոցառումների համալիր է, որն հասցեագարվում է բաժնետերերին և շահագրգիռ անձանց՝ նրանց կողմից կշռադատված ներդրումային և կառավարչական որոշումներ կայացնելու կամ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդելու հնարավոր այլ գործողություններ իրականացնելու համար: Ընկերության տեղեկատվական քաղաքականությունը նպատակաուղղված է բաժնետերերին և շահագրգիռ անձանց (ներդրումային և կառավարչական որոշումների կայացման համար ունեն էական նշանակություն) տեղեկատվություն ստանալու իրավունքի առավել ամբողջական իրականացմանը:
- 3.2. Ընկերության տեղեկատվական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- ա) «հաճախականությունը», որն Ընկերության տնօրինության տակ ունեցած լրատվամիջոցներով բաժնետերերին և շահագրգիռ անձանց մշտապես և պարբերաբար Ընկերության մասին տեղեկությունների ապահովումն է,
 - բ) «օպերատիվությունը», որը բաժնետերերին և շահագրգիռ անձանց հնարավորինս կարճ ժամանակամիջոցում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդելու կարողություն ունեցող առավել էական, ինչպես նաև բաժնետերերի և /կամ շահագրգիռ անձանց շահերին առնչվող իրադարձությունների և փաստերի մասին իրազեկման ապահովումն է,
 - գ) «հասանելիությունը», որն Ընկերության կողմից տեղեկությունների տարածման այնպիսի միջոցների օգտագործումն է, որը բաժնետերերին և շահագրգիռ անձանց Ընկերության մասին բացահայտված տեղեկություններին ազատ, առանց դժվարությունների և նվազագույն ծախսերով մուտքի հնարավորություն է ապահովում,
 - դ) «արժանահավատությունը», որը բաժնետերերին և շահագրգիռ անձանց իրականությանը համապատասխանող տեղեկությունների տրամադրման ապահովումն է, ինչպես նաև Ընկերության կողմից վերահսկողության իրականացումն է, որպեսզի Ընկերության կողմից տարածվող տեղեկությունները խեղաթյուրված կամ սխալ չլինեն,
 - ե) «ամբողջականությունը», որը բավարար տեղեկատվության ապահովումն է, որն անհրաժեշտ է բաժնետերերին և շահագրգիռ անձանց նրանց հետաքրքրող հարցերի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար,
 - զ) «հավասարակշռվածությունը», որն ապահովում է Ընկերության բաց և թափանցիկ լինելու խելամիտ հավասարակշռվածություն՝ մի կողմից կոնֆիդենցիալության, մյուս կողմից՝ բաժնետերերի և շահագրգիռ անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի առավելագույն ծավալով իրականացնելու նպատակով, սակայն խստիվ պահպանելով պետական, առևտրային և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններին հասանելիության սահմանափակման մասով Ընկերության շահերը,
 - է) «իրավահավասարությունը», որն ապահովում է բոլոր բաժնետերերին տեղեկությունների ստացման հավասար իրավունքներ և հնարավորություններ՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
 - ը) «տեղեկատվական ռեսուրսների պաշպանությունը», որն ապահովում է ծառայողական և առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշպանության համար օրենսդրությամբ թույլատրված եղանակների և միջոցների կիրառման Ընկերության իրավունքը,
 - թ) «օբյեկտիվություն», որը ապահովում է Ընկերության կողմից իր գործունեության լուսաբանման ընթացքում իր մասին բացասական տեղեկությունների բացահայտումը, որոնք բաժնետերերի և շահագրգիռ անձանց համար համարվում են էական:
- 3.3. Ընկերությունն ապահովում է պետական, առևտրային և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշպանությունը՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:
- 3.4. Ընկերության և նրա գործունեության մասին բացահայտվող տեղեկությունների արժանահավատության և ամբողջականության համար պատասխանատվությունը կրում է Ընկերության գործադիր մարմինը:

- 3.5. Սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունները պետք է բացահայտվեն հայերեն լեզով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ լեզուներով: Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում (www.artsakhhpp.com) սույն կանոնակարգով սահմանված դեպքերում տեղեկությունները բացահայտվում են անգլերեն լեզվով:

Հոդված 4. Տեղեկությունների բացահայտման եղանակներն ու ձևերը

- 4.1. Ընկերության մասին տեղեկությունների բացահայտումն իրականացվում է տեղեկությունների տարածման հետևյալ եղանակով`
- ա) էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներով հրապարակելու միջոցով,
 - բ) ինտերնետային ցանցում հրապարակելու միջոցով,
 - գ) տպագիր մամուլում հրապարակելու միջոցով,
 - դ) բաժնետերերի պահանջով Ընկերության կողմից նրանց տեղեկատվության կամ փաստաթղթերի պատճենների տրամադրման միջոցով` գործող օրենսդրության պահանջներին համապատասխան,
 - ե) այլ եղանակներով` մասնավորապես` ձեռնարկներում, բուկլետներում և այլ տպագիր հրատարակության, ինչպես նաև բաժնետերերի և շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ կազմակերպելու կամ մամուլ ասուլիս գումարելու միջոցով:
2. Ընկերության մասին տեղեկությունների բացահայտումն իրականացվում է տեղեկությունների տարածման հետևյալ ձևերով`
- ա) Ընկերության կանոնադրություն և Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտեր,
 - բ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ` «ժողով») մասին տեղեկություններ,
 - գ) Ընկերության միջանկյալ հաշվետվություններ, այդ թվում` եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները,
 - դ) Ընկերության տարեկան հաշվետվություններ, այդ թվում` տարեկան ֆինանսական հաշվետվությունները,
 - ե) հրապարակման ենթակա էական փաստերն ու տեղեկությունները,
 - զ) Ընկերության փոխկապակցված անձանց մասին տեղեկությունները,
 - է) Ընկերության շահութաբաժնային քաղաքականության մասին տեղեկությունները,
 - ը) Ընկերության արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման փուլերում բացահայտվող տեղեկությունները, այդ թվում` արժեթղթերի ազդագիրը,
 - թ) օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ` «խորհուրդ») որոշումներով սահմանված այլ տեղեկություններ:

Հոդված 5. Տեղեկությունների հրապարակումն ինտերնետային ցանցում

- 5.1. Ընկերությունն իրականացնում է իր գործունեության հետ առնչվող էական փաստերի (իրադարձությունների, գործողությունների) ու տեղեկությունների մասին հաղորդագրությունների, ընթացիկ և ֆինանսական հաշվետվությունների, Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) գների վրա հնարավոր ազդեցություն ունեցող տեղեկությունների, ինչպես նաև օրենսդրությամբ բացահայտման ենթակա այլ

տեղեկությունների հրապարակում ինտերնետային ցանցում գրանցված www.artsakhhpp.com հասցեով Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում (այսուհետ՝ «ինտերնետային կայք»)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

- 5.2. Ընկերությունն իրականացնում է նաև մամուլի հաղորդագրությունների, հոդվածների, հարցազրույցների, գովազդային նյութերի և այլ տեղեկությունների հրապարակում Ընկերության ինտերնետային կայքում:
- 5.3. Ընկերությունն ապահովում է ինտերնետային կայքում օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով բացահայտման ենթակա այլ տեղեկություններին ազատ մուտքի հնարավորությունը:
- 5.4. Եթե օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով այլ բան սահմանված չէ, սույն կետով նախատեսված տեղեկությունները, որոնք հրապարակվում են Ընկերության ինտերնետային կայքում, պետք է բոլորի համար լինեն հասանելի, մասնավորապես՝
 - ա) Ընկերության կանոնադրությունը, այդ թվում՝ Ընկերության կանոնադրության փոփոխություններն ու լրացումները,
 - բ) Ընկերության մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերը, այդ թվում դրանց փոփոխություններն ու լրացումները,
 - գ) վարչա-կազմակերպական կառուցվածքը,
 - դ) Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկությունները,
 - ե) Ընկերության ֆինանսական հաշվետվությունները (եռամսյակային պարբերությամբ), կայքում հրապարակելու պահից առնվազն 3 տարի ժամկետով,
 - զ) աուդիտորական եզրակացությունը՝ կայքում հրապարակելու պահից առնվազն 3 տարի ժամկետով,
 - է) արժեթղթերի ազդագիրը,
 - ը) էական փաստեր և տեղեկություններ պարունակող փաստաթղթերը,
 - թ) Ընկերության ռազմավարության, զարգացման և կառուցման ծրագրերի մասին տեղեկություններ,
 - ժ) Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը,
 - ժա) մրցույթների անցակման մասին հայտարարություններ,
 - ժբ) Ընկերության փոխկապակցված անձանց մասին տեղեկությունները և փոխկապակցված անձանց կազմում տեղի ունեցած փոփոխությունները՝ կայքում հրապարակելու պահից առնվազն 3 տարի ժամկետով,
 - ժգ) սույն կանոնակարգը,
 - ժդ) ԶԼՄ-ների ցանկը, որտեղ հրապարակվում է Ընկերության մասին տեղեկությունները,
 - ժե) այլ տեղեկություններ (փաստաթղթեր), որոնք պետք է բացահայտվեն օրենսդրությամբ և Ընկերության առանձին որոշումներով,
 - ժզ) տեղեկություններ (փաստաթղթեր), որոնք ներկայացվում են ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին՝ տրամադրման համար անհրաժեշտ ժամկետներով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով:

Հոդված 6. Տեղեկությունների հրապարակումն էլեկտրոնային լրատվամիջոցներով

6.1. Ընկերությունն, անհրաժեշտության դեպքում, իրականացնում է էլեկտրոնային լրատվամիջոցների միջոցով մամուլի հաղորդագրությունների և այլ տեղեկությունների հրապարակում:

Հոդված 7. Տեղեկությունների հրապարակումը մամուլի միջոցներով

7.1. Ընկերությունը, անհրաժեշտության դեպքում, իրականացնում է մամուլի հաղորդագրությունների, հոդվածների, հարցազրույցների, գովազդային նյութերի և այլ տեղեկությունների հրապարակում պարբերաբար տպագրվող մամուլի միջոցներով, որոնք լույս են տեսնում ԼՂՀ-ում, ՀՀ-ում կամ արտերկրում:

Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի հրապարակել մամուլում տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

7.2. Ընկերությունն իր ֆինանսատնտեսական գործունեության հետ առնչվող էական փաստերի (իրադարձությունների, գործողությունների) և տեղեկությունների մասին հաղորդագրությունները, Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) գների վրա հնարավոր ազդեցություն ունեցող տեղեկությունները, ինչպես նաև օրենսդրությամբ բացահայտման ենթակա այլ տեղեկությունները կարող է հրապարակել տպագիր մամուլում՝ օրենսդրությամբ և Ընկերության ներքին ակտերով սահմանված ժամկետներում:

Հոդված 8. Բաժնետերերին տեղեկություններին (փաստաթղթերին) հասանելիության ապահովումը և նրանց պահանջով փաստաթղթերի պատճենների տրամադրումը

8.1. Ընկերությունն ապահովում է բաժնետերերին հասանելիություն օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերին և տեղեկություններին: Նշված փաստաթղթերը պետք է Ընկերության կողմից տրամադրվեն բաժնետերերի կողմից Ընկերության վարչական շենքում ծանոթանալու համար պահանջի ներկայացման պահից 5 օրվա ընթացքում: Ընկերությունը պարտավոր է բաժնետերերի պահանջով նրանց տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները: Ընկերության կողմից փաստաթղթի պատճենի տրամադրման համար զանձվող գումարը չի կարող գերազանցել դրա պատրաստման համար կատարվող ծախսերը:

8.2. Փաստաթղթերին և տեղեկություններին հասանելիությունը (փաստաթղթերի պատճենների տրամադրումը) կատարվում է բաժնետիրոջ կողմից գրավոր ձևով Ընկերության գլխավոր տնօրենի կամ կորպորատիվ քարտուղարի անունով պատրաստված համապատասխան պահանջի ներկայացման հիման վրա: Պահանջում ներկայացվում է դիմողի անունը, հայրանունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գտնվելու վայրը), նրան պատկանող բաժնետոմսերի քանակը և տեսակը, ծանոթանալու համար պահանջվող փաստաթղթի անվանումը և ծանոթանալու եղանակը (փաստաթղթին ծանոթացում կամ պատճենի ստացում):

8.3. Ընկերության մասին սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերին և տեղեկություններին հասանելիությունը ապահովվում է Ընկերության կորպորատիվ քարտուղարի կողմից:

8.4. Ընկերության կորպորատիվ քարտուղարը սեփական նախաձեռնությամբ Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրից տեղեկություններ է ստանում պահանջ ներկայացնող բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի քանակի վերաբերյալ:

Հոդված 9. Տեղեկությունների բացահայտման այլ եղանակները

- 9.1. Ընկերությունն, անհրաժեշտության դեպքում, կարող է իր և իր գործունեության մասին տեղեկություններ, գովազդային նյութեր և այլ տեղեկություններ հրապարակել ձեռնարկներում, բուկլետներում և այլ տպագիր հրատարակության միջոցով:
- 9.2. Ընկերությունն, անհրաժեշտության դեպքում, կարող է կազմակերպել Ընկերությունում տեղի ուեցած կամ տեղի ունեցող կարևոր իրադարձություններին նվիրված մամուլ ասուլիսներ, բաժնետերերի (նրանց լիազոր ներկայացուցիչների), ներդրողների, ներդրումային վերլուծաբանների կամ պետական լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներ (այդ թվում նաև՝ նշված անձանց կողմից հանդիպման կազմակերպման վերաբերյալ գրավոր առաջարկի դեպքում):
- 9.3. Ընկերությունը կարող է մասնակցել կոնֆերանսների և գիտաժողովների (սիմպոզիումների) աշխատանքներին:
- 9.4. Ընկերությունը կարող է օգտագործել տեղեկությունների բացահայտման այլ եղանակներ:

Հոդված 10. Ժողովի մասին տեղեկություններ

- 10.1. Ժողովի գումարման մասին հաղորդագրությունները, քվեարկության արդյունքների և ընդունված որոշումների մասին տեղեկատվությունները իրականացվում են Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
- 10.2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի տրամադրվող պարտադիր տեղեկությունների (փաստաթղթերի) ցանկը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական այլ ակտերով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին տրամադրվող լրացուցիչ տեղեկությունները (փաստաթղթերը) սահմանվում են Խորհրդի կամ Ժողովի գումարումը նախաձեռնող այլ անձանց կողմից:
- 10.3. Ժողովի գումարման մասին հաղորդագրությունը հրապարակվում է Ընկերության ինտերնետային կայքում:

Հոդված 11. Ընկերության տարեկան հաշվետվությունների բացահայտումը

- 11.1. Ընկերության տարեկան հաշվետվությունները հանդիսանում են Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկությունների բացահայտման հիմնական աղբյուր և բաժնետերերի համար Ընկերության հաշվետու տարվա ընթացքում կատարված աշխատանքի գնահատման ամփոփ փաստաթուղթ:
- 11.2. Ընկերության տարեկան հաշվետվությունները նախնական հավանության են արժանանում Խորհրդի և հաստատվում են Ժողովի կողմից:
Ընկերության տարեկան հաշվետվություններում ընդգրկված տվյալների արժանահավատությունը հաստատվում է Ընկերության վերստուգող հանձնաժողովի կողմից:
- 11.3. Մինչև Ժողովի կողմից տարեկան հաշվետվությունների հաստատումը և դրանց սահմանված կարգով հրապարակումը Ընկերությունը պարտավոր է տարեկան ֆինանսական հաշվետվությունների ստուգման և հաստատման նպատակով ներգրավել Ընկերության և նրա բաժնետերերի հետ փոխկապակցված անձ չհանդիսացող աուդիտորի:
- 11.4. Ընկերության տարեկան հաշվետվությունը կազմվում է հետևյալ մասերից.

- ա) անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություն,
 - բ) Ընկերության կառավարման մարմինների տարեկան զեկույց,
 - գ) Ընկերության համապատասխան պատասխանատու անձանց հայտարարությունն այն մասին, որ իրենց լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը,
 - դ) ԼՂՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով պահանջվող այլ տեղեկություններ:
- 11.5. Ընկերությունը պետք է բացահայտի տարեկան հաշվետվությունները՝ ապահովելով հետևյալ պահանջները.
- ա) հաշվետվությունները պետք է առնվազն հրապարակվեն Ընկերության ինտերնետային կայքում,
 - բ) հրապարակված հաշվետվությունների բովանդակությունը պետք է համապատասխանի ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների բովանդակությանը,
 - գ) ՀՀ կենտրոնական բանկի պահանջի դեպքում Ընկերությունը պետք է կարողանա ապացուցել հաշվետվությունների հրապարակման փաստը և կոնկրետ ժամանակը:

Հոդված 12. Միջանկյալ հաշվետվությունների տեսքով տեղեկությունների բացահայտումը

- 12.1. Ընկերության կողմից միջանկյալ հաշվետվությունների տեսքով տեղեկությունների բացահայտումն իրականացվում է եռամսյակային պարբերականությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, ծավալով և ժամկետներում:
- 12.2. Միջանկյալ հաշվետվությունը կազմվում է հետևյալ մասերից.
- ա) միջանկյալ ֆինանսական հաշվետվություն,
 - բ) կառավարման մարմինների միջանկյալ զեկույց,
 - գ) Ընկերության համապատասխան պատասխանատու անձանց հայտարարությունն այն մասին, որ իրենց լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:
- 12.3. Միջանկյալ հաշվետվությունների բացահայտվում են սույն կանոնակարգի 11 հոդվածի 11.5-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ:

Հոդված 13. Էական փաստերի և տեղեկությունների բացահայտումը

- 13.1. Ընկերության կողմից էական փաստերի և տեղեկությունների բացահայտումը կատարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով, ծավալով և ժամկետներում:

- 13.2. Էական փաստերը և տեղեկությունները բացահայտվում են սույն կանոնակարգի 11 հոդվածի 11.5-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ:
- 13.3. Այն էական փաստերը և տեղեկությունները, որոնք հանդիսանում են ներքին (ինսայդերական) տեղեկություններ, Ընկերությունը բացահայտում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 163-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան այդ մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.4. Այն էական փաստերը և տեղեկությունները, որոնք չեն հանդիսանում ներքին (ինսայդերական) տեղեկություններ, Ընկերությունը պետք է հրապարակի այդ մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 14. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկումների գործընթացների փուլերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտում

- 14.1. Ընկերությունն Ընկերության թողարկումների գործընթացների փուլերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտումն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով, ծավալով և ժամկետներում:

Հոդված 15. Արժեթղթերի ազդագրի տեսքով տեղեկությունների բացահայտումը

- 15.1. Ընկերությունն արժեթղթերի ազդագրի տեսքով տեղեկությունների բացահայտումն իրականացնում օրենսդրությամբ սահմանված կարգով, ծավալով և ժամկետներում:

Հոդված 16. Ընկերության փոխկապակցված անձանց մասին տեղեկությունների բացահայտում

- 16.1. Ընկերությունն իրականացնում է իրեն փոխկապակցված անձանց մասին տեղեկությունների (անվանում, հիմնադրման երկիրը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, հարանուն, ազգանուն և քաղաքացիությունը) և փոխկապակցվածության հիմքերը) բացահայտումը Ընկերության ինտերնետային կայքում՝ ապահովելով դրանցում կատարված փոփոխությունների ժամանակին թարմացումը:

Հոդված 17. Ընկերության պաշտոնատար անձանց կողմից տեղեկությունների բացահայտման կարգը

- 17.1. Խորհրդի անդամների և պաշտոնատար անձանց կողմից Ընկերության մասին տեղեկությունների բացահայտումն իրականացվում է սույն կանոնակարգի, Խորհրդի կողմից սահմանված ներքին իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան՝ պահպանելով ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված պետական, առևտրային, ծառայողական և այլ գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը:
- 17.2. Խորհրդի նախագահն իրավունք ունի պաշտոնապես մեկնաբանել Խորհրդի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև շարադրել Խորհրդի տեսակետները (հարցազրույցների, հեռախոսազրույցների ժամանակ) Խորհրդի նիստերում քննարկված հարցերի վերաբերյալ՝ պահպանելով ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված պետական, առևտրային, ծառայողական և այլ գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը:
- 17.3. Խորհրդի անդամներն իրավունք ունեն հրապարակայնորեն շարադրել իրենց անձնական տեսակետները Խորհրդի նիստերում քննարկված հարցերի, ինչպես նաև Խորհրդի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ՝ պահպանելով ԼՂՀ

օրենսդրությամբ սահմանված պետական, առևտրային, ծառայողական և այլ գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը:

- 17.4. Բացառապես Ընկերության գլխավոր տնօրենը, հասարակայնության հետ կապերի պատասխանատու աշխատակիցը կամ Ընկերության գլխավոր տնօրենի կողմից լիազորված այլ պաշտոնատար անձինք իրավունք ունեն Ընկերության գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ հրապարակայնորեն ելույթ ունենալ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում անցկացվող կոնֆերանսների, խորհրդակցությունների, սեմինարների, պետական մարմիններում աշխատանքային հանդիպումների և այլ հասարակական միջոցառումների ընթացքում՝ պահպանելով ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված պետական, առևտրային, ծառայողական և այլ գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 18. Ընկերության կողմից կոնֆիդենցիալ և ներքին (ինսայդերական) տեղեկությունների պաշտպանությունը

- 18.1. Ընկերությունն իրականացնում է կոնֆիդենցիալ և ներքին (ինսայդերական) տեղեկությունների պաշտպանություն՝ ԼՂՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: